



## Երեւանի Պետական Համալսարանի Պատուիրակութեան Հանդիպումը Հայ Կաթողիկէ Համալսարանականներու Միութեան Հետ

0 Գաղութային November 4, 2015

PRINT EMAIL A- A+



Հայ կաթողիկէ համալսարանականներու միութեան կազմակերպութեամբ, երէկ՝ երեքշաբթի, 3 նոյեմբեր 2015-ին, տեղի ունեցաւ հանդիպում-գրոյց մը Լիբանան այցելած Երեւանի պետական համալսարանի դասախօսներու կազմին հետ, Հայ կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ սրահին մէջ, երեկոյեան ժամը 8:00-ին: Հանդիպումին ներկայ էր համալսարանաւարտ եւ համալսարանական երիտասարդներու համեստ խմբակ մը:

Բարի գալուստի խօսք արտասանեց Արամ Գարատաղեան: Ան ողջունեց Երեւանի պետական համալսարանի պատուիրակութեան անդամները, ապա կարեւորութեամբ անդրադարձաւ անոնց այցելութեան նպատակին եւ առաքելութեան: Արամ Գարատաղեան շնորհակալութիւն յայտնեց նաեւ Լիբանանի հայոց թեմի Ազգային առաջնորդարանին՝ այս շրջագիծին մէջ օգտաշատ եւ ազնիւ համագործակցութեան համար, ապա խօսքը փոխանցեց պատուիրակութեան անդամներուն:

Երեւանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտութեանց հիմնարկի փոխնախագահ Մհեր Յովհաննիսեան նախ ներկայացուց ու ծանօթացուց դասախօսներու կազմը, ապա անդրադարձաւ Երեւանի պետական համալսարանի ներկայութեան՝ լիբանանահայ կեանքին մէջ: Ան յայտնեց, որ որոշ բացակայութենէն ետք Երեւանի պետական համալսարանը նոր ծրագիրներով կրկին վերադարձած է լիբանանահայ գաղութ եւ մեծ ուշադրութիւն դարձուցած կրթական հաստատութիւններու մէջ հայագիտական առարկաներու վիճակին եւ սերտելով բոլոր դժուարութիւններն ու պայմանները, յաջողած է իրականացնել ուսուցիչներու եւ առհասարակ հետաքրքրութիւն ունեցողներու զարգացման տարբեր ծրագիրներ՝ հարթելու համար հայագիտական առարկաներու դասաւանդման հետ կապուած բոլոր դժուարութիւնները:

Ան պատասխանելով համալսարանականներու հարցումներուն հաստատեց, որ Երեւանի պետական համալսարան կրնան ընդունուիլ բոլոր ազգերու ներկայացուցիչները առանց խտրութեան եւ ընտրել իրենց նախասիրած մասնագիտութիւնը: Իսկ ինչ կը վերաբերի արեւմտահայերէնին, Մհեր Յովհաննիսեան նշեց, որ հայոց լեզուի երկու ճիւղերը՝ թե՛ արեւելահայերէնը, թե՛ արեւմտահայերէնը կարելի է օգտագործել Երեւանի պետական համալսարանին մէջ:

Ան հաստատեց, որ Լիբանանեան համալսարանին հետ համագործակցութեան առաջին քայլերը արդէն առնուած են:

Մհեր Յովհաննիսեան անդրադարձաւ Երեւանի պետական համալսարանը իբրեւ հոգեւոր արժէք ներկայացնող կառոյց ընդունելու անհրաժեշտութեան: Ան նշեց, որ համալսարանը կը մնայ այն դարբնոցը, որ սփիւռքը հայ պիտի պահէ: Ան խօսեցաւ նաեւ հեռակալ ուսուցման կարելիութիւններուն եւ պայմաններուն, մագիստրոսական եւ դոկտորական ծրագիրներու վերաբերեալ որոշ մանրամասնութիւններու եւ համալսարանի հայագիտական բաժանմունքին մասին, ինչպէս նաեւ որոշ տեղեկութիւններ հաղորդեց ցեղասպանագիտութեան ճիւղի աշխատանքներուն մասին: Ան յայտնեց, որ պետական համալսարանին մէջ պսակաւոր արուեստից մակարդակով կը գործեն մօտ 50, իսկ մագիստրոսական մակարդակով՝ աւելի քան 100 մասնագիտութիւններ:

Պատուիրակութեան անդամ պատմաբան Արտակ Մովսիսեան անդրադարձաւ մասնագիտութիւններու պաշտպանութեան հայաստանեան համակարգին մասին:

Աւարտին խօսք առաւ Ազգային առաջնորդարանի տեղեկատուական բաժանմունքի պատասխանատու Ռաֆֆի Տեմիրճեան: Ան մեծապէս գնահատեց ՀԿՀՄ-ի նախաձեռնութիւնը հանդիպելու պատուիրակութեան հետ: Ողջունեց հայ առաքելական եւ հայ կաթողիկէ համայնքներու համագործակցութիւնը յօգուտ նոր սերունդի հայեցի դիմագիծի պահպանման:

Հանդիպումին իր խօսքը փոխանցեց նաեւ Ս. Խաչ եկեղեցւոյ ժողովրդապետ հայր Սեպուհ Կարապետեան: Ան իր փորձառութենէն մեկնելով ընդգծեց Երեւանի պետական համալսարանին մէջ կրթութիւն ստանալու գործնական եւ տեսական առաւելութիւնները: Հանդիպումի աւարտին Արամ Գարատաղեան շնորհակալութիւն յայտնեց դասախօսներուն՝ օգտաշատ տեղեկութիւններուն համար: Ապա Մհեր Յովհաննիսեան փոխանցեց պատուիրակութեան նուէրը՝ զիրքերու փաթեթը Հայ կաթողիկէ համալսարաններու միութեան, ապա ըսաւ, թէ Երեւանի պետական համալսարանը պատրաստ է աշխատելու բոլոր անոնց հետ, որոնք ցանկութիւն ունին ուսանելու Երեւանի մէջ: Ապա ան կարեւոր նկատեց ուսանողական մակարդակի շփումները, որոնք կ'իրականացուին թէ՛ պարբերաբար գրականութիւն փոխանցելու միջոցով եւ թէ՛ ուղղակի հանդիպումներով ու միասնական քննարկումներով:

Ան շնորհակալութիւն յայտնեց միութեան, որ կարելիութեան սահմաններուն մէջ կ'աշխատի օգտակար դառնալ լիբանանահայ գաղութին, համայնքին եւ երիտասարդութեան: